ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱԴՐԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Երևան 0044, Բագրևանդի փ. 5, հեռ. (+374 10) 29-43-26, 29-45-84, 29-45-73

ԷԼՔ № 516-3100
05 09 2018 թ.

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ
Ս. ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մինասյան

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նախաձեռնվել է ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ին ընդունված 430-Ն որոշման փոփոխություն կատարելու նախագիծ, համաձայն որի նախատեսվում է իրականացնել <<Պատիվ ունեմ>> ծրագրով ընդունելության երկրորդ փուլ՝ հաշվի առնելով այդ բովանդակությամբ դիմումների մեծ քանակը:

Նախագծի համաձայն նախատեսվում է դիմումների ընդունման գործընթացը կազմակերպել 2018թ. հոկտեմբերի 1-ից 25-ը: Դիմումները ընդունվելու են տարածքային զինվորական կոմիսարիատներում:

Խնդրում եմ Ձեզ կազմակերպել համապատասխան տեղեկատվության տարածումը, տրամադրումը ուսանողներին և ցանկացողների ցուցակագրումը, որի մեջ պետք է նշվի ուսանողի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, զինկոմիսարիատը և հեռախոսահամարը: Ամբողջական ցուցակները խնդրում եմ ուղղարկել ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչություն:

Կից ուղարկում եմ նաև <<Պատիվ ունեմ>> ծրագրի սեղմ տարբերակը ևս մեկ անգամ ծանոթանալու և ուսանողներին ներկայացնելու համար:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

ՀՀ ՊՆ ԿԱԴՐԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
քիծ 2-րդ դասի պետական խորհրդական Մ. ՇԻՐԻՆՅԱՆ

Մուտքի թիվ 22-04-571
«10» 09 2018թ.

«Պատիվ ունեմ»

Ծրագրի գաղափարախոսությունն է՝ բուհական տարկետումը կապել ապագա սպայական ծառայության հետ: Պետական հավատարմագրում ունեցող (պետական կամ մասնավոր) բուհ ընդունված, պարտադիր ժամկետային ծառայության ենթակա յուրաքանչյուր երիտասարդ իրավունք ունի դիմելու ծրագրում ընդգրկվելու համար: Մի շարք պայմանների համապատասխանելու դեպքում (առողջական վիճակ, հրամանատարական ջիղըորոշելուն միտված հոգեբանական թեստավորում, ուսման ընթացքում գնահատականի նվազագույն շեմի պահպանում) նա կարող է ընդգրկվել նշված ծրագրում՝ հավակնելով սպայի կոչման: Քաղաքացիական բուհերի ուսանողները ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում յուրաքանչյուր շաբաթ օր զինվորական պատրաստության դասընթացները հաջող անցնելու և քաղաքացիական բուհի դիպլոմ ստանալու դեպքում բակալավրի աստիճան ստանալուն զուգընթաց կստանան լեյտենանտի սպայական կոչում և 3 տարի ժամկետով ծառայություն կանցնեն զինված ուժերի մարտական հերթապահություն իրականացնող ստորաբաժանումներից մեկում: Ծառայությունը կազմակերպվում է քաղաքացիական մասնագիտությունը հաշվի առնելով, բայց բոլոր դեպքերում՝ 1-ին կարգի զորամասերում (առաջնագիծ):Ծրագրի կարևոր արդյունքներից է լուրջ սպայական պահեստազորի ձևավորումը և տակտիկական օղակի զինվորականներով անձնակազմը համալրելը /դասակի հրամանատար, վաշտի հրամանատար/:

Մեծաքանակ շարքային պահեստազոր ունեցող բանակին անհրաժեշտ են հմուտ և առաջնագծում ծառայություն անցած պահեստազորի սպաներ:

Հիմնական առավելությունները՝

- Ծառայությունը իրականացնել որպես սպա
- Ուսման վարձի փոխհատուցում, ներառյալ մագիստրատուրան /միջին գնահատականի պահպանման պարագայում/
- Զին.ծառայողին հասանելի սոցիալական երաշխիքներ /ծառայողական բնակարան, բուժ. օգնություն և միջինից բարձր աշխատավարձ/